Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Հասցե՝ 0010, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, տարածք 3
Հեռ.՝ +374 93 515 600
Էլ. հասցե՝ ldpf.foundation@gmail.com Կայք՝ www. ldpf.am

Կարծիք

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1568-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի վերաբերյալ

31.08.2023 թ.-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում քննարկման է ներկայացվել «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1568-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ)։

Ընդունելով Նախագծում տեղ գտած փոփոխված ռազմավարության գործողությունների ծրագրում տեղ գրած գործողությունների կարևորությունը՝ անհրաժեշտ ենք համարում որոշ հանձնառությունների մասով կատարել հստակեցումներ/լրացումներ՝ դրանց շրջանակում կարևոր բաղադրիչներ ընդգրկելու և հետագայում տարընթերցումներից խուսափելու նպատակով։ Այսպես.

1. Առաջարկվում է գործողությունների ծրագրի «ԲԱՑ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի «Հանձնառության հակիրճ նկարագիրը» տողում, «ինչպես նաև բոլոր դատական գործերի» բառերից հետո լրացնել «այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների» բառերը։ Այս լրացում-հստակեցումն անհրաժեշտ է, որպեսզի դատական համակարգի հաշվետվողականության և թափանցիկության ապահովման, համապարփակ վիճակագրության վարման պահանջն ապահովվի ոչ միայն գործերի ըստ էության քննության վարույթներով, այլ նաև պակաս կարևորություն չունեցող մյուս վարույթների մասով, այնինչ Նախագծի

գործող խմբագրության մեջ առկա շարադրանքը կարող է որոշակի տարընթերցման տեղ թողնել՝ վերը նշված վարույթները «բոլոր դատական գործերի» արտահայտության մեջ ներառված լինելու/չլինելու մասով։

2. Միևնույն ժամանակ առաջարկվում է գործողությունների ծրագրի «ԲԱՑ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» բաժնի «Հանձնառության հակիրճ նկարագիրը» տողի «ա)» ենթակետում «գործերի տեսակներ, դատավորներ, ժամկետներ» բառերից հետո լրացնել «այդ թվում՝ ըստ գործերի քննության ողջ տևողության» բառերը։ Սույն լրացման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ գործողությունների ծրագրում մի կողմից նշված է, որ, գործող իրավակարգավորումների համաձայն, հաշվետու ժամանակահատվածում ավարտված գործերի քննության միջին տևողության որոշման ցուցիչները երկուսն են, այն է՝ նիստերի քանակ և ժամանակ (հաշվարկի միավոր՝ ժամ), այնուամենայնիվ, չի ուրվագծվում այս վիճակագրական ցուցիչների կատարելագործման միջոցը։ Հարկ ենք համարում ընդգծել, որ գործող երկու ցուցիչները հնարավորություն չեն տալիս ստանալու գործերի քննության տևողության վերաբերյալ իրական և առավել արդիական տեղեկատվություն և բավարար չեն գործերի քննության տևողության ողջամտությունը գնահատելու համար, ավելին, նշված վիճակագրական տվյալի հավաքման անհրաժեշտությունը բխում է նաև միջազգային չափորոշիչներից, մասնավորապես Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) հաստատած դատական վիճակագրության վերաբերյալ ուղենիշներից։

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ